

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԻՆԵ ՎԱԼԵՐԻԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՕԺԱՆԴԱԿ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ. 00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (հայոց լեզու)
մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Զ. Հ. Գյուլամիրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Լ. Մ. Խաչատրյան**

մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ **Ա. Վ. Հովհաննիսյան**

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. հունիսի 2-ին՝ ժամը 12⁰⁰-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. հունիսի 2-ին:

**Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝**

Ա. Հ. Սվաջյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հատուկ ուսուցման համակարգում կարևորագույն խնդիր է մայրենիի ուսուցումը. նրա ծրագրային նյութերի ամբողջական յուրացումով է պայմանավորված երեխայի կենսագործունեությունը և հետագա ուսումնական գործընթացի ողջ արդյունավետությունը: Առանց մայրենի լեզվի իմացության անհնարին է մյուս ուսումնական առարկաների ծրագրային նյութի յուրացումը: Մայրենի լեզվի դասավանդման կարևորագույն խնդիրների՝ *խոսելու, հաղորդակցվելու, կարդալու և գրելու* կարողությունների որոշակի մակարդակի ձևավորումն ընկած է ինչպես հանրակրթական, այնպես էլ հատուկ (օժանդակ) դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքների հիմքում: Դրանց անբավարար ձևավորումը կխոչընդոտի մասնավորապես մտավոր խանգարումներ ունեցող երեխաների՝ հասարակության մեջ ներառմանն ու աշխատանքային գործունեության մեջ ընդգրկմանը:

Որպեսզի հաղորդակցումն իրականացվի գործունեության այդ ձևին ներկայացվող պահանջներին համապատասխան, անհրաժեշտ է կարևորել լեզվի ուղղագրությունը, իսկ բանավոր խոսքի պարագայում՝ ուղղախոսությունը:

Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների գրավոր աշխատանքներում, պայմանավորված նրանց մտավոր, հոգեկան և կազմաբնախոսական առանձնահատկություններով, ուղղագրական սխալներն առավել բազմաբնույթ են և չափազանց շատ: Մասնավորապես, արտասահմանյան մի խումբ հետազոտողներ նման սխալների մեծ քանակը պայմանավորում են մտավոր հետամնաց երեխաների խոսքի արտասանական կողմի թերություններով, հնչութային ընկալումների անբավարար զարգացմամբ և բառաքերականական կառուցվածքի անկատարությամբ (Ռ. Ե. Լևինա, 1961, Լ. Ն. Սպիրովա, 1961, Գ. Ա. Կաշե, 1968, Ռ. Ի. Լավաևա, 2001, Լ. Ն. Եֆիմենկովա, 2006):

Հետազոտողների մեկ այլ խումբ էլ գրավոր խոսքում տեղ գտած սխալների մեծ քանակի առկայությունը պայմանավորում է այս երեխաների տարբեր զգայարանների (լսողության, տեսողության) վերլուծահամադրական գործունեության թուլությամբ (Լ. Ն. Կադոչկին, 1953, Ս. Ս. Լյապիդևսկի, 1968, Օ. Ա. Տոկարևա, 1969, Ե. Պ. Կուզմիչևա, 1996, Կ. Վ. Կոմարով, 2005):

Որոշ հետազոտություններում էլ նշվում է հոգեկան գործընթացների ոչ լիարժեք զարգացման կապը գրավոր խոսքում տեղ գտած սխալների մեծ քանակի հետ (Լ. Կ. Նազարովա, 1962, Ե. Մ. Գոպիչենկո, 1979, Վ. Գ. Պետրովա, 1979, Ն. Բ. Լավրենտևա, 2009):

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մտավոր հետամնացություն ունեցող երեխաների գրավոր խոսքի առանձնահատկությունները պետք է դիտարկել համալիր ձևով՝ հաշվի առնելով նրանց ոչ միայն բանավոր խոսքի զարգացման մակարդակը, այլև մի շարք ոչ խոսքային գործառույթների անբավարար վիճակը:

Հայ իրականության մեջ հատուկ (օժանդակ) դպրոցում մայրենիի ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունների շուրջ ցայսօր նշված ոլորտում համալիր ուսումնասիրություն չի կատարվել, չեն հաշվառվել և համակարգվել

մտավոր հետամնաց հայ երեխաների գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկությունները, այդ ուղղությամբ չեն մշակվել մեթոդական ուղեցույցներ:

Այսպիսով՝ մեր ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է հայ իրականության մեջ նշված հիմնախնդրի անբավարար ուսումնասիրությամբ, հայալեզու մեթոդական գրականության բացակայությամբ, հատուկ (օժանդակ) դպրոցների մայրենիի դասագրքերում հայոց լեզվի ուղղագրության ոչ համարժեք պարզաբանմամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ հատուկ (օժանդակ) դպրոցում հայերենի ուղղագրության ուսուցման մեթոդական այնպիսի համալիրի մշակումն է, որը կնպաստի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների գրավոր խոսքի ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև երկրորդային խանգարումների շտկման հնարավորությունների կատարելագործմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ հատուկ (օժանդակ) դպրոցի սովորողների հայոց լեզվի ուղղագրության ուսուցման, դրա դժվարությունների բացահայտման և հաղթահարման գործընթացն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ հատուկ (օժանդակ) դպրոցի սովորողների ուղղագրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման արդյունավետությունն ու կայունությունը ապահովող մեթոդական համալիրն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ: Հատուկ (օժանդակ) դպրոցի սովորողների կողմից հայոց լեզվի ուղղագրության յուրացման գործընթացը կարող է առավել բարձր արդյունավետություն ունենալ և համեմատաբար զերծ մնալ դժվարություններից, եթե՝

- այն իրականացվի անձնակենտրոն ուղղվածությամբ և հումանիստական մոտեցումների հիման վրա,
- հստակեցվեն օժանդակ դպրոցում մայրենի լեզվի դասընթացի նպատակները, բովանդակությունն ու կառուցվածքը, լրամշակվեն հայոց լեզվի ծրագրի «Ուղղագրություն» բաժինը, ուսումնաօժանդակ համալիրները,
- մայրենիի ուսուցման, մասնավորապես, սովորողների ուղղագրական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանն ուղղությամբ իրականացվող աշխատանքների վերլուծության հիման վրա սահմանվեն դրանց կիրառման հատուկ պայմանները,
- կրթադաստիարակչական գործընթացի իրականացման մեթոդներն ընտրելիս հաշվի առնվեն նշված դպրոցներում սովորող աշակերտների զարգացման խանգարումների և հոգեկան գործընթացների ինքնատիպությունը, տարիքային, կազմաբնախոսական առանձնահատկությունները,
- մշակվի և ուսուցման գործընթացում ներդրվի ուղղագրական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը միտված մեթոդական այնպիսի համալիր, որը կնպաստի նաև մտավոր հետամնաց սովորողների երկրորդային խանգարումների շտկմանը և անձի ընդհանուր զարգացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Բացահայտել հատուկ (օժանդակ) դպրոցում հայերենի ուղղագրության ուսուցման մեթոդիկայի պատմական նախադրյալները և զարգացման միտումները:

2. Ուսումնասիրել և վերլուծել մայրենիի ուսուցման, մասնավորապես, սովորողների ուղղագրական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանն ուղղությամբ

իրականացվող աշխատանքների դրվածքն օժանդակ դպրոցում, հիմնավորել այս ուղղությամբ հատուկ գործունեության անհրաժեշտությունն ու դրա իրականացման հնարավորությունները:

3. Ուսումնասիրել հատուկ (օժանդակ) դպրոցի սովորողների գրավոր խոսքին բնորոշ (ուղղագրական) սխալները, բացահայտել դրանց պատճառները, նախանշել կանխման արդյունավետ ուղիները:

4. Մշակել, փորձարարությամբ հիմնավորել և ՀՀ հատուկ (օժանդակ) դպրոցներում ներդնել ուղղագրության ուսուցման մեթոդական այնպիսի համալիր, որը կհամապատասխանի սովորողների մտավոր, ֆիզիկական ու տարիքային առանձնահատկություններին և համահունչ կլինի անձնակենտրոն ուսուցման մոտեցումներին:

5. Փորձարարական աշխատանքի միջոցով ստուգել և հիմնավորել հատուկ (օժանդակ) դպրոցում սովորողների ուղղագրական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը միտված մեր կողմից մշակված մեթոդական համալիրը, որը կապահովի մտավոր հետամնացություն ունեցող սովորողների ոչ միայն ուղղագրական կարողությունների և հմտությունների արդյունավետ կերպով յուրացումը, այլև կնպաստի այս երեխաների երկրորդային խանգարումների շտկմանը, անձի զարգացմանն ընդհանրապես:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ ԵՆ ԾԱՌԱՅԵԼ հայ և արտասահմանյան՝ հոգեբանամանկավարժական, մեթոդական և լոգոպեդական գրականության մեջ ներկայացված մեր հիմնախնդրին առնչվող հայեցակարգային հիմնական մի շարք դրույթներ, մասնավորապես՝

- մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հոգեբանամանկավարժական առանձնահատկությունների հաշվառումը և երկրորդային խանգարումների շտկմանն ու փոխհատուցման տեսությունը (Լ. Ս. Վիգոտսկի, 1983, 2003, Ս. Յա. Ռուբինշտեյն, 1986, Բ. Պ. Պուզանով, 2003),
- մտավոր հետամնացություն ունեցող երեխաների գրավոր խոսքի առանձնահատկությունների, դրանց դրսևորման ձևերի մասին տեսությունը (Ռ. Ե. Լևինա, 1961, Վ. Վ Վորոնկովա, 1987, Ի. Ն. Սադովնիկովա, 1997, Ա. Կ. Ակսյոնովա, 2002),
- հայոց լեզվի ուղղագրության սկզբունքները (Ս. Գ. Աբրահամյան, 1981, Ռ. Հ. Բաղրամյան, 1989, Ա. Ղարիբյան, 1997),
- հիմնախնդրի վերաբերյալ մանկավարժության մեջ գոյություն ունեցող ընդունելի տեսակետները (Ն. Ս. Ռոժդեստովենսկի, 1960, Ս. Պ. Ռեդոզուբով, 1963, Ա. Ե. Տեր-Գրիգորյան, 1980, Ս. Վ. Գյուլբուդադյան, 1980, Մ. Լ. Լվով, 1987, Զ. Հ. Գյուլամիրյան, 2009),
- մայրենի լեզվի ուսուցման գործնական ուղղվածության տեսությունը (Ի. Պ. Կորնև, 1955, Մ. Ֆ. Գնեզդիլով, 1965, Գ. Ի. Դանիլկինա, 1979, Վ. Վ. Վորոնկովա, 1987, Ա. Կ. Ակսյոնովա, 2002),
- հատուկ (օժանդակ) դպրոցում մայրենիի դասագործընթացում լոգոպեդական աշխատանքների կիրառման անհրաժեշտության մասին տեսությունը (Ռ. Ե. Լևինա,

1961, Ե. Մ. Գոպիչենկո, 1979, Ե. Ֆ. Սոբոտովիչ, 1979, Գ. Ա. Վոլկովա, 1985, Ի. Ն. Սադովնիկովա, 1997, Ռ. Ի. Լալանա, 2001),

- հետազոտության համար հիմք են հանդիսացել նաև ՀՀ հատուկ և ներառական դպրոցների հայոց լեզվի առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը:

Դրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետազոտության հետևյալ

ՄԵԹՈԴՆԵՐԸ՝

գիտատեսական մեթոդներ՝ գիտական ուսումնասիրությունների արդյունքների վերլուծություն, դասական մանկավարժների՝ խնդրո առարկայի վերաբերյալ տեսությունների ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում, մտավոր հետամնաց դպրոցականների գրավոր աշխատանքների ուսումնասիրում և արդյունքների վերլուծություն,

էմպիրիկ մեթոդներ՝ մանկավարժական գործընթացի դիտում, հարցարանային և թեստային ուսումնասիրություններ, գրույցներ, փորձարարական հետազոտության իրականացում, արդյունքների համեմատական վերլուծություն,

վիճակագրական մեթոդներ՝ փորձարարական հետազոտության ընթացքում ստացված վիճակագրական տվյալների քանակական և որակական վերլուծություն, արդյունքների տրամագրային պատկերում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

- Ուսումնասիրվել և համակարգվել են մտավոր հետամնացություն ունեցող հայ երեխաների գրավոր խոսքում հանդիպող սխալները, բացահայտվել են դրանց պատճառներն ու արտահայտման ձևերը:
- Ուսումնասիրվել, վերլուծվել և համակարգվել են ՀՀ հատուկ (օժանդակ) դպրոցում սովորողների ուղղագրական կարողությունների ձևավորման մեթոդները, այդ գործընթացի ախտորոշման արդյունքները անձնակենտրոն կրթության համատեքստում:
- Մշակվել է հատուկ (օժանդակ) դպրոցի սովորողների ուղղագրական կարողությունների ձևավորման գործընթացի արդյունավետությունը բարձրացնող մեթոդական համալիր, որը ենթադրում է նշված ուղղությամբ աշխատանքներն սկսել գրաձանաչության գործընթացին զուգընթաց՝ կարևորելով ոչ խոսքային գործառնությունների զարգացումը:
- Որոշակիացվել և հիմնավորվել են հատուկ (օժանդակ) դպրոցում ուղղագրության ուսուցման արդյունավետության մանկավարժական պայմանները:
- Փորձարարական աշխատանքների միջոցով ստուգվել և լրամշակվել է հատուկ (օժանդակ) դպրոցի սովորողների ուղղագրական կարողությունների ձևավորմանը միտված գործնական աշխատանքների համալիր, մշակվել են համակցված խանգարումների պարագայում դրանց գործադրման ուղղությամբ մեթոդական երաշխավորություններ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ուսումնասիրվել և դիտարկվել են հայերենի ուղղագրության տեսությունն ու պրակտիկան ժամանակակից հայոց լեզվի տեսանկյունից, ինչպես նաև բացահայտվել և ներկայացվել է հատուկ (օժանդակ) դպրոցում հայերենի ուղղագրության ուսուցման գործընթացի ինքնատիպությունը՝

հաշվի առնելով ինչպես ժամանակակից մանկավարժության ու մեթոդիկայի, այնպես էլ հատուկ մանկավարժության և հոգեբանության արդի ձեռքբերումները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Հատուկ (օժանդակ) դպրոցում հայերենի ուղղագրության ուսուցման և ուղղագրական կարողությունների ձևավորման ու ամրակայման առաջարկված մեթոդական հնարների համալիրը կնպաստի սովորողների համապատասխան ունակությունների ձևավորմանը, ոչ միայն մտավոր հետամնաց երեխաների ճիշտ գրելու կարողության մշակմանը, այլև այս երեխաների երկրորդային խանգարումների՝ խոսքի, մտածողության, հոգեկան բոլոր գործընթացների շտկմանն ու զարգացմանը: Նշված ձեռքբերումները կարող են գործածվել մանկավարժական բուհերի հատուկ մանկավարժության բաժնի դասախոսների և ուսանողների, հանրակրթական դպրոցների ներառական դասարանների ուսուցիչների, հատուկ դպրոցների համար ծրագրեր և դասագրքեր ստեղծող համակազմների և այդ ոլորտում աշխատող մանկավարժների կողմից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿՈՐԿԱԾՈՒԹՅՈՒՆԸ երաշխավորվում են հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմող տեսությունների, հայեցակարգային դրույթների համալիր վերլուծությամբ, երկարատև գիտամանկավարժական գործունեության, ինչպես նաև փորձարարական եղանակով ձեռք բերված հարուստ նյութի հետևողական ու մանրագին մշակմամբ, արդյունքների ընդհանրացմամբ, առաջարկված մեթոդական երաշխավորությունների ներդրմամբ: Հետազոտության արդյունքներն ու գիտական վերլուծությունները պարբերաբար ներկայացվել ու քննարկվել են գիտական հրապարակումների ձևով:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. ՀՀ հատուկ (օժանդակ) դպրոցներում գործող ուղղագրության ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետությունը պայմանավորված է այդ գործընթացի մի շարք առանձնահատկությունների հաշվառմամբ. ուղղագրական կարողությունների և հմտությունների ձևավորումն օժանդակ դպրոցում իրականացնել փուլ առ փուլ՝ սկսելով ուսումնառության առաջին իսկ օրերից՝ դեռևս գրաճանաչության շրջանից՝ իրականացնելով անձնակողմնորոշված ուսումնական գործընթաց:
2. Հանրակրթական դպրոցի համար ընդունված ուղղագրության ուսուցման մեթոդներն ու հնարները, ինչպես նաև վարժությունների համակարգն ամբողջությամբ ընդունելի չեն հատուկ (օժանդակ) դպրոցի համար, քանի որ դրանցում հաշվի չեն առնված մտավոր հետամնացություն ունեցող հայ երեխաների զարգացման առանձնահատկություններն ու ուսուցման հատուկ պայմանները. հետևաբար առաջարկվող մեթոդական երաշխավորությունները նպաստում են ուղղագրության ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:
3. Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների՝ հայերենի ուղղագրության ուսուցման գործընթացը պետք է ունենա մեթոդական յուրահատուկ ուղղվածություն՝ ուղղագրության ուսուցումը դիտելով ոչ միայն նպատակ, այլև այս երեխաների երկրորդային խանգարումների շտկման կարևորագույն միջոց, ինչն առաջարկվում է մեր կողմից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱԶԱ ԵՆ հանդիսացել Երևանի թ.2, թ.5, թ.6, թ.12 հատուկ (օժանդակ), թ.17, թ.114, թ.187, թ.150 ներառական կրթություն իրականացնող հանրակրթական, Նուբարաշենի թ.1, թ.11, Արագածոտնի մարզի Աշտարակի թ.18 հատուկ (օժանդակ) դպրոցները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է 3 ՓՈԽԼՈՎ: Առաջին փուլում (1994-98թթ.) հանգամանալից ուսումնասիրվել են նշված խնդիրները, որին մեծապես նպաստել է նաև օժանդակ դպրոցում մայրենի լեզու դասավանդելու մեր փորձը:

Ինչպես սեփական աշխատանքային փորձի, այնպես էլ մեր դիտարկումների ու հետազոտությունների արդյունքների վերլուծությունների ճանապարհով բացահայտվել են դիտարկվող հիմնախնդրի ուսումնասիրվածության մակարդակը. պարզվել է մտավոր հետամնացություն ունեցող երեխաների գրավոր խոսքի չափազանց անմխիթար վիճակը: Այս փուլում հիմնախնդրի վերաբերյալ իրականացվել է նաև հատուկ մանկավարժական, հոգեբանական, մեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծություն, որի հիման վրա առաջադրվել են հետազոտության դրույթները, խնդիրները, ընտրվել են հետազոտության անցկացման մեթոդները:

Աշխատանքի երկրորդ փուլն ընդգրկում է 1998-2005թթ.-ը, որի ընթացքում իրականացվել են մի շարք փորձարարական աշխատանքներ ՀՀ հատուկ (օժանդակ) դպրոցների 2-9-րդ դասարանների՝ թվով 245 աշակերտների շրջանում, ինչպես նաև ՀՀ մի քանի ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներում (թ.17, թ.114, թ.187, թ.150)՝ թվով 87 աշակերտների շրջանում՝ հաշվի առնելով ներառական կրթության ներմուծումը ՀՀ կրթական համակարգում և դրանց արդյունքները:

Աշխատանքի 3-րդ փուլում (2005-2012թթ.) վերլուծվել, համակարգվել և ընդհանրացվել են հետազոտության արդյունքները, ստուգվել է առաջարկված վարժությունների համալիրի կիրառման արդյունավետությունը, շարադրվել է ատենախոսությունը, ձևակերպվել են հետազոտությունից բխող եզրակացությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ կատարվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստերում, ներհամալսարանային ու հանրապետական մի շարք գիտաժողովներում, ատենախոսության թեմայով հրատարակված գիտական հոդվածներում: Հետազոտության թեմայի վերաբերյալ զեկուցումներ են կարդացվել փորձարկվող դպրոցներում կազմակերպված սեմինարների, մեթոդիավորման նիստերի ընթացքում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ: Ատենախոսությունը ներկայացված է 184 էջ ծավալով՝ ներառյալ հավելվածները: Այն բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից, 183 սկզբնաղբյուր պարունակող օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են ատենախոսության նպատակը, խնդիրները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են հետազոտության փուլերը, շարադրվել են գիտական

նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Առաջին՝ **«Հետազոտության հիմնախնդրի դրվածքը, խնդիրները, մեթոդները և աշխատանքի կազմակերպումը»** գլխի՝ **«Հիմնախնդրի պատմական նախադրյալները»** ենթագլխում ներկայացվել է հայ իրականության մեջ նշված ուղղությամբ հիմնարար հետազոտությունների բացակայության փաստը, հիմնավորվել է, որ թեև հիմնախնդրի շուրջ արժեքավոր հետազոտություններ են կատարել մի շարք ռուս գիտնական-հետազոտողներ (Ռ. Ե. Լևինա, 1961, Մ. Ֆ. Գնեզդիլով, 1965, Ս. Ս. Լյապիդևսկի, 1968, Գ. Ա. Կաշե, 1968, Ի. Պ. Կորնև, 1969, Ռ. Յա. Ժուրովյովա, 1975, Վ. Գ. Պետրովա, 1979, Ի. Վ. Կոլոմիտսկինա, 1983, Վ. Վ. Կորոնկովա, 1987, Ա. Կ. Ակսյոնովա, 2002), սակայն ժամանակակից մարտահրավերները պահանջում են վերանայել ու լրամշակել նրանց հիմնադրույթները՝ դրանք համապատասխանեցնելով արդի կրթական պահանջներին:

«Ուղղագրության ուսուցման հիմնախնդրի դրվածքը օժանդակ դպրոցում» երկրորդ ենթագլխում ներկայացվել են հարցաթերթիկային ուսումնասիրության նպատակն ու արդյունքները, բնութագրվել է հատուկ (օժանդակ) դպրոցում սովորողների ունեցած ուղղագրական կարողությունների մակարդակը, բացահայտվել են դրանց ձեռքբերման գործընթացում նրանց կրած դժվարությունները: Հիմնավորվել է, որ օժանդակ դպրոցի սովորողների ուղղագրական գիտելիքների և համապատասխան կարողությունների ձևավորման մակարդակը պայմանավորված է ոչ միայն նրանց խանգարումներով պայմանավորված ընդհանուր զարգացման մակարդակով, այլև մի շարք այլ գործոններով՝ մեթոդիկայում մշակված հատուկ հնարների բացակայությամբ, ծրագրի համապատասխան բաժնի անկատարությամբ, ուսումնաօժանդակ նյութերի բացակայությամբ, ուսուցիչների մասնագիտական կրթության որակով, սովորողների ընտանեկան դաստիարակությամբ, սոցիալական միջավայրով և այլն:

«Մտավոր հետամնաց երեխաների գրավոր խոսքում թույլ տրված սխալների բնույթը, պատճառները, տարածվածությունը» երրորդ ենթագլխում ներկայացվել են հատուկ (օժանդակ) դպրոցների 2-9 դասարանների 158 երեխայի (92-ը՝ 1-4-րդ դասարանցի, 66-ը՝ 5-9-րդ դասարանցի) գրավոր աշխատանքներում թույլ տրված սխալների դասակարգման բնույթն ու վերլուծությունը: Պարզվել է, որ մտավոր հետամնաց երեխաները հաճախ թույլ են տալիս *հնչյունային բնույթի* սխալներ, քիչ չեն նաև *տառի գրաֆիկական պատկերի գրության հետ կապված* սխալները: Բացահայտվել է, որ դրանց մեջ բավական մեծ թիվ են կազմում *ուղղագրական սխալները*. ցածր դասարաններում 92-ից 57-ի գրավոր աշխատանքներում (62%), բարձրերում 66-ից 59-ում (89,4%) (տրամագիր 1):



Տրամագիր 1. Մտավոր հետամնացություն ունեցող սովորողների ուղղագրական սխալների տարածվածության պատկերը

Չորրորդ՝ «Մտավոր հետամնաց երեխաների ուղղագրական կարողությունների յուրացման դժվարությունները, դրանց կապը սովորողների զգայարանների զարգացման աստիճանի հետ» ենթագլխում ներկայացվել են մտավոր հետամնաց երեխաների գրավոր խոսքում թույլ տրված սխալների պատճառները, բացահայտվել են դրանց հոգեֆիզիոլոգիական հիմքերը: Գրելու կարողության ձևավորվածության աստիճանով պայմանավորված՝ խմբավորվել են մտավոր հետամնաց երեխաները՝ հիմք ընդունելով սովորողների առաջնայնորեն վնասված զգայարանները: Հիմնավորվել է մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հոգեկան և կազմաբնախոսական առանձնահատկությունների ազդեցության անխուսափելիությունն ուղղագրական կարողությունների ձևավորման գործընթացում, ներկայացվել են դրանց շտկմանն ու փոխհատուցմանը միտված մեթոդական երաշխավորություններ:

Երկրորդ՝ «Ուղղագրության ուսուցման տեղն ու դերը օժանդակ դպրոցում մայրենի լեզվի ուսուցման ընթացքում» գլխի առաջին՝ «Հայոց լեզվի ուղղագրության ուսուցման գիտական սկզբունքները և ուղղագրության տեղը օժանդակ դպրոցի մայրենի լեզվի ուսուցման մեթոդիկայում» ենթագլխում անդրադարձել ենք հայերենի ուղղագրության սկզբունքներին՝ նկատի ունենալով, որ մտավոր հետամնաց երեխաների գրագետ գրելու կարողության ձևավորման ու զարգացման գործընթացում լուրջ խնդիրներ են առաջանում անգամ գրությամբ և արտասանությամբ չտարբերվող բառերի գրության ընթացքում: Ներկայացված են համառոտ տեղեկություններ հայերենի ուղղագրության սկզբունքների և դրանց բազմազանության վերաբերյալ, ինչպես նաև դրանցով պայմանավորված ուղղագրության ուսուցման մի շարք դժվարություններ, հիմնավորել ենք, որ հատուկ (օժանդակ) դպրոցում ուղղագրության ուսուցման մեթոդաբանությունը, չնայած մի շարք ընդհանրությունների, պետք է տարբերվի հանրակրթական դպրոցից՝ պայմանավորված մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հոգեկան և կազմաբնախոսական առանձնահատկություններով:

«Ուղղագրության ուսուցման գործընթացի բովանդակության արտացոլումը օժանդակ դպրոցի մայրենի լեզվի առարկայական ծրագրերում» երկրորդ ենթագլխում

վերլուծվել է մայրենի լեզվի գործող ծրագրի բովանդակությունը, ներկայացվել է, թե ինչ համամասնության մեջ են գտնվում մայրենի լեզվից տրվող գիտելիքները և ուղղագրության ուսուցումը, որքանով են դրանք նպաստում հատուկ (օժանդակ) դպրոցում մայրենի լեզվի ուսուցման գերխնդրին՝ *ճիշտ խոսելու, գրելու* կարողությունների ու հմտությունների ձևավորմանը և զարգացմանը:

Քննության է առնվել ծրագրային նյութերի բաշխվածությունն ըստ ուսումնական տարիների և փուլերի, ուսումնասիրվել են հատուկ (օժանդակ) դպրոցի մայրենի լեզվի՝ ոչ միայն ներկայում գործող, այլև նախորդ տարիներին գործածված հայոց լեզվի ծրագրերն ու չափորոշիչները (1983, 1992, 2000, 2003, 2006թթ.), հիմնավորվել է գործող ծրագրերի ուղղագրության ուսուցման բաժինները վերանայելու, մասնավորապես բեռնաթափելու և երաշխավորվող ուղղագրական արժեք ունեցող բառերի ցանկը պարզեցնելու անհրաժեշտությունը:

«Ուղղագրական կարողությունների ձևավորումը որպես մտավոր հետամնաց երեխաների երկրորդային խանգարումների շտկման միջոց» երրորդ ենթագլխում շեշտադրվել են ուղղագրության ուսուցման գործընթացի՝ մտավոր հետամնաց երեխաների երկրորդային խանգարումները շտկելու ընդարձակ հնարավորությունները՝ մասնավորեցնելով դրանք մտավոր ունակությունների (վերլուծում, համադրում, ընդհանրացում, դասակարգում և այլն), հոգեկան գործընթացների (մտածողություն, խոսք, ուշադրություն, հիշողություն, երևակայություն, կամք), ուղղախոսական սխալների շտկման, լսողական, տեսողատարածական ընկալումների, գլխուղեղի խոսքի կենտրոնների և, վերջապես, անձի բազմակողմանի դաստիարակության ուղղությամբ առաջարկվող առաջադրանքների, վարժությունների, խաղերի համալիրների արդյունավետությամբ: Ներկայացվել են ուղղագրության ուսուցման ընթացքում իրականացվող տարաբնույթ վարժություններ, մասնավորապես, բառի հնչյունավանկային վերլուծության և համադրության կարողությունների զարգացմանը նպաստակա ուղղված աշխատանքներ:

«Ուղղագրության ուսուցման գործընթացի մեթոդական առանձնահատկությունները օժանդակ դպրոցում» չորրորդ ենթագլխում առաջարկվել են մեթոդական երաշխավորություններ, պահանջ-կողմնորոշումներ, հիմնավորվել են, որ դրանք մեծապես կնպաստեն հատուկ (օժանդակ) դպրոցում ուղղագրության ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Դրանցից են՝ երեխաների հնչյունային լսողության զարգացումը, նրանց՝ վերլուծելու և համադրելու կարողությունների մշակումն ու կատարելագործումը, գրավոր աշխատանքների ժամանակ հնարավորինս շատ երեխաներին ծանոթ զուգորդումների ստեղծումը, ուղղագրական արժեք ներկայացնող բառերով կազմված գրավոր նյութը երեխաների կենսափորձին, նրանց գիտելիքներին, մտավոր կարողություններին և ճանաչողական հետաքրքրություններին հարմարեցումը, երեխաների հիշողության մեջ բառի սխալ գրության ամրապնդման բացառումը և այլն:

Երրորդ՝ **«Ուղղագրական կարողությունների ձևավորման մեթոդների կիրառման առանձնահատկությունները օժանդակ դպրոցում»** գլխի առաջին՝ **«Գրաճանաչության շրջանում ուղղագրական կարողությունների յուրացմանը նախապատրաստող աշխատանքների իրականացումը»** ենթագլխում հիմնավորվել է ճիշտ գրելու կարողության զարգացումն ուսումնառության առաջին իսկ օրերից սկսելու

անհրաժեշտությունը, հստակեցվել են գրաճանաչության 3 շրջաններում օժանդակ դպրոցում իրականացվող աշխատանքների բովանդակությունն ու ձևերը, որոնք միտված են ուղղագրական կարողությունների ձևավորման գործընթացի խթանմանը:

«Ուղղագրական աշխատանքի բովանդակությունը և ուսուցման գործընթացի առանձնահատկությունները» երկրորդ ենթագլխում դիտարկվել են մեր կողմից ընտրված ուղղագրության ուսուցման մեթոդների առավելություններն ու թերությունները, ներկայացվել մտավոր հետամնաց երեխաների կողմից հայերենի ուղղագրության յուրաքանչյուր բաժնի յուրացման առանձնահատկությունները: Ներկայացվել են ձայնավորների, երկհնչյունների և յ ձայնակապի, բաղաձայնների, քերականական ուղղագրության ուսուցման առանձնահատկությունները: Շարադրվել են նշված ուղղություններով իրականացրած փորձարարական աշխատանքների արդյունքները, տրվել են դրանց համեմատական վերլուծությունները:

«Գրավոր խոսքում տեղ գտած սխալների շուրջ տարվող աշխատանքները և դրանց կանխման եղանակները» երրորդ ենթագլխում հիմնավորվել են ուղղագրական սխալների կանխման անհրաժեշտությունն ու ձևերը՝ մասնավորապես պայմանավորված այս երեխաների նյարդային համակարգի առանձնահատկություններով: Այդ ուղղությամբ առաջարկվել են մի շարք աշխատանքի ձևեր, մեթոդական հնարներ, սխալների ուղղման արդյունավետ միջոցներ, որոնց հիմնավորել է փորձարարական աշխատանքների արդյունավետությունը:

Չորրորդ՝ **«Փորձարարական հետազոտության վերլուծություն և արդյունքների ընդհանրացում»** ենթագլխում ներկայացվել են հատուկ (օժանդակ) դպրոցում հայերենի ուղղագրության ուսուցման առանձնահատկությունների շուրջ իրականացրած ավելի քան տասնամյա մեր մանկավարժական փորձարարության արդյունքները: Ներկայացվել են ուսումնասիրությանը մասնակցած թեթև աստիճանի մտավոր հետամնացություն ունեցող (համաձայն հիվանդությունների միջազգային դասակարգման՝ F-7 0, IQ-50-69) շուրջ 245 սովորողների՝ գրավոր աշխատանքներում տեղ գտած սխալների բնույթը, տարածվածության և առաջացման պատճառների քննությունը, ինչպես նաև գործող մայրենիի դասագրքերի, ծրագրերի և ուսումնաօժանդակ ձեռնարկների վերլուծությունը: Դիտարկվել են 2-րդ փուլում իրականացրած փորձարարական աշխատանքների 158 աշակերտների ձեռքբերումներ, ստուգողական և փորձարարական խմբերի համեմատական արդյունքները: Փորձարարական հետազոտությանը մասնակցել են 2-9-րդ դասարանների 158 սովորողներ, առաջադրվել է ընդհանուր թվով 4 գրավոր աշխատանք. 2 թելադրություն, 2 արտագրություն (աղյուսակ 1):

**Մտավոր հետամնացություն ունեցող սովորողների թույլ տված ուղղագրական
սխալների դասակարգումը**
(մինչև փորձարարական աշխատանքը)

Թ.	Դաս.	Սով. քան.	Գրավ. աշխ. տեսակը	Սխալ. ընդհ. քանակը	Ձայնավոր. ուղղագր. սխալներ	Բաղաձ. ուղղագր. սխալներ	Քերակ. ուղղագր. սխալներ
1.	2-4-րդ	92	արտագր. թելադր.	46 85	6 (13%) 14 (16,4%)	31 (67,3%) 58 (68%)	9 (19,5 %) 13 (15%)
2.	5-9-րդ	66	արտագր. թելադր.	67 149	10 (14,9%) 31 (20,8%)	52 (77,6%) 97 (65,1%)	5 (7,4%) 21 (14%)

Ներկայացված աղյուսակից երևում է, որ բացի հնչյունային և տառագրական սխալներից, մտավոր հետամնացություն ունեցող սովորողների գրավոր աշխատանքներում բավական մեծ թիվ են կազմում ավանդական և քերականական բնույթի ուղղագրական սխալները:

Մեր փորձարարական հետազոտության առաջին փուլում հատուկ (օժանդակ) դպրոցի սովորողների գրավոր աշխատանքներն ուսումնասիրելիս (ուսուցիչների կողմից հանձնարարված) առնչվեցինք ոչ օրինաչափ, մեզ համար տարօրինակ մի իրավիճակի. գրավոր աշխատանքներում առկա սխալների մեջ ամենաքիչ տոկոսն էին կազմում ուղղագրական բնույթի սխալները: Վերջին հանգամանքը մեզ լուրջ մտորելու առիթ տվեց, և այս անգամ գրավոր աշխատանքները բացառապես անց էինք կացնում մեթոդապես մշակված սխեմայով: Նշված գործընթացի բազմակողմանի վերլուծությունները ցույց տվեցին, որ մտավոր հետամնաց երեխաների գրավոր աշխատանքներում հանդիպող ուղղագրական սխալների համեմատաբար ցածր քանակը պայմանավորված էր ուսուցիչների «առանձնահատուկ» հնարների կիրառմամբ՝ բառի գրապատկերի պարզապես ցուցադրմամբ, բառի արտանկարումով, տառ առ տառ թելադրությամբ, չիմաստավորված հուշումով և այլ մեթոդապես չհիմնավորված և չարդարացված հնարներով:

Սխալների պատկերը բոլորովին այլ էր, երբ վերլուծեցինք մեր կողմից անցկացրած գրավոր աշխատանքներում (արտագրություններ, թելադրություններ) տեղ գտած սխալները: Վերլուծությունից պարզ դարձավ, որ ուղղագրական բնույթի սխալները կազմում են բոլոր տեսակի սխալների 2-5-րդ դասարաններում՝ 62%-ը և 5-9-րդ դասարաններում՝ 89,4%-ը (տրամագիր 1): Ընդ որում՝ ուղղագրական սխալների մեջ տարանջատել ենք ձայնավորների ուղղագրությանը վերաբերող սխալներ. արտագրություններում՝ 17, 3%, թելադրություններում՝ 16,4% (2-5-դ դասարաններ),

արտագրություններում՝ 10,8%, թելադրություններում՝ 12,9% (5-9-դ դասարաններ), բաղաձայնների ուղղագրության, չ ձայնակապի և երկինջությունների գրության սխալներ. արտագրություններում՝ 67,3%, թելադրություններում՝ 68% (2-5-դ դասարաններ), արտագրություններում՝ 39,1%, թելադրություններում՝ 30,8% (5-9-դ դասարաններ), քերականական բնույթի սխալների մեջ խմբավորել ենք մեծատառերի, հատուկ անունների, խոսքի մասերի և տողադարձի սխալները, որոնք կազմել են սխալների արտագրություններում՝ 7,4%, թելադրություններում՝ 14% (2-5-դ դասարաններ), արտագրություններում՝ 4,4%, թելադրություններում՝ 11, 4% (5-9-դ դասարաններ):

Հատուկ (օժանդակ) դպրոցում սովորողների գրավոր աշխատանքներում տեղ գտած համանման սխալների վերլուծություն կատարել ենք նաև փորձարարական աշխատանքից հետո: Հետազոտությանը մասնակցել են 2-9-րդ դասարանների 158 սովորողներ, առաջադրվել է ընդհանուր թվով 4 գրավոր աշխատանք. 2 թելադրություն, 2 արտագրություն (աղյուսակ 2):


Աղյուսակ 2

Մտավոր հետամնացություն ունեցող սովորողների թույլ տված ուղղագրական սխալների դասակարգումը

/փորձարարական աշխատանքից հետո/

Թ	Դաս.	Սով. քան.	Գրավ. աշխ. տեսակը	Սխալների ընդհանուր քանակը	Ձայնավ. ուղղագր. սխալներ	Բաղաձ. ուղղագր. սխալներ	Քերակ. ուղղագր. սխալներ
1	2-4-րդ	92	արտագր.	29	4 (8,%)	18 (39,1%)	7 (15,2%)
			թելադր.	52	11 (12,9%)	32 (37,6%)	9 (10,5%)
2	5-9-րդ	66	արտագր.	28	4 (5,9%)	21 (31,3%)	3 (4,4%)
			թելադր.	86	23 (15,4%)	46 (30,8%)	17(11,4%/

Ներկայացրած աղյուսակից երևում է, որ հատուկ (օժանդակ) դպրոցում ուղղագրության տարբեր բաժինների ուսուցման ընթացքում մեթոդական որոշակի՝ առանձնահատուկ աշխատանքի դեպքում հնարավոր է բարելավել մտավոր հետամնացություն ունեցող սովորողների գրավոր խոսքը՝ էապես նվազեցնելով ուղղագրական սխալները: Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ նաև, որ ձեռքբերումներն առավել շոշափելի են ավանդական ուղղագրության սկզբունքին պատկանող բառերի ուղղագրությունն ուսուցանելիս (40% 2-4-րդ դասարաններում և 31% 5-9-րդ դասարաններում), վերջինս պայմանավորված է այս երեխաների ոչ կամային հիշողության համեմատաբար պահպանվածությամբ: Մինչդեռ, առավել բարդ է կանոնարկմամբ և քերականության վրա հիմնված ուղղագրական երևույթների ուսուցման գործընթացը (10% 2-4-րդ դասարաններում և 17% 5-9-րդ դասարաններում), սակայն այստեղ ևս հնարավոր է առաջընթաց արձանագրել:



Տրամագիր 2. Ուղղագրական սխալների նվազման ընդհանրական պատկերը

Մեր հետազոտության տվյալները վկայում են նաև, որ ուղղագրական սխալների հաղթահարումն ավելի ակնհայտ է արտագրության վարժությունների ժամանակ: Այս հանգամանքը մենք պայմանավորում ենք նախապատրաստական աշխատանքների ընթացքում (գրաձանաչության շրջանում) այս երեխաների հոգեկան գործընթացների շտկման և զարգացման լայնածավալ աշխատանքների կիրառմամբ: Թերևս դժվարությունն ավելի շատ նկատելի է քերականական ուղղագրության ուսուցման գործընթացում, սակայն այստեղ էլ, կիրառելով օժանդակ հնարներ, հենվելով այս երեխաների պահպանված զգայարանների աշխատանքի վրա և վերանայելով ծրագրով առաջադրված ուղղագրական արժեք ունեցող բառերի ցանկը, կարելի է հասնել զգալի արդյունքների (տրամագիր 2):

Մեր աշխատանքի երրորդ փուլում ընդհանրացրել ենք ձեռք բերած արդյունքները և դրանց հիման վրա կատարել եզրահանգումներ (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Ուղղագրական սխալների նվազման դինամիկան փորձարարական աշխատանքներից հետո

Թ	Դաս.	Մով. քան.	Ուղղագր. սխալ. քանակը ստ. խմբում	Ուղղագր. սխալ. քանակը փորձ. խմբում	Դինամիկան
1	2-4-րդ	92	131 (արտագր. -46 թելադր.- 85)	81 (արտագր. -29 թելադր.- 52)	50 (38%)-ով արտագր. -17 (36,9%) թելադր.- 33 (33,8%)
2	5-9-րդ	66	216 (արտագր. -46 թելադր. - 85)	114 (արտագր. -28 թելադր.- 86)	102 (47,2%)-ով արտագր. -39 (58,2%) թելադր.- 63 (42,2%)

Այսպիսով, ինչպես երևում է աղյուսակ 3-ից, համակարգված և մեթոդապես ճիշտ կազմակերպված աշխատանքները կարող են զգալիորեն նվազեցնել մտավոր հետամնացություն ունեցող սովորողների գրավոր խոսքում տեղ գտած սխալների քանակը. 38%-ով՝ 2-4-րդ դասարաններում, 47,2%-ով՝ 5-9-րդ դասարաններում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրությամբ հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Հատուկ (օժանդակ) դպրոցում հայերենի ուղղագրության ուսուցման և սովորողների՝ համապատասխան գիտելիքների և կարողությունների ձեռքբերման ուղղությամբ առ այսօր չկան հիմնարար հետազոտություններ, հրապարակում առկա մեթոդական գրականությունը հիմնականում ռուսալեզու է (կամ թարգմանություն) և, բնականաբար, հաշվի առնված չեն մտավոր հետամնացություն ունեցող հայ երեխաների գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկությունները: Հետևաբար դրանք այսօր կիրառելի չեն:

2. Հատուկ (օժանդակ) դպրոցի մայրենի լեզվի դասընթացի ողջ համակարգում ուղղագրության ուսումնասիրումը կարևոր բաժիններից է, որը ոչ միայն նպատակ է, այլև կարևորագույն միջոց՝ մտավոր հետամնաց երեխաների՝ ինչպես երկրորդային խանգարումները շտկելու, այնպես էլ մի շարք հմտություններ ձեռք բերելու համար: Այն շահեկանորեն զգալի կլինի միայն մեթոդապես ճիշտ մշակված վարժությունների համակարգի կիրառման և դրանց արդյունքների մշտադիտարկման դեպքում:

3. Հատուկ (օժանդակ) դպրոցներում իրականացրած փորձաքննության ընթացքում հիմնավորվել է, որ ուղղագրական կարողությունների և հմտությունների ձևավորումն օժանդակ դպրոցում պետք է իրականացնել փուլ առ փուլ՝ սկսելով ուսումնառության առաջին իսկ օրերից՝ դեռևս գրաձանաչության նախապատրաստական շրջանից՝ իրականացնելով անձնակողմնորոշված ուսումնական գործընթաց: Ընդ որում՝ անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի հոգեկանի զարգացման առանձնահատկությունները, ունեցած խանգարման բնույթն ու արտահայտվածության աստիճանը, ինչպես նաև պահպանված հնարավորությունները: Միայն անձնակենտրոն կրթադաստիարակչական գործընթացը կստեղծի երեխայի կարիքները տեսնելու, ճանաչելու, նրա նկատմամբ ապրումակցող վերաբերմունք դրսևորելու և խնդիրների հաղթահարման ճանապարհին մենակ չթողնելու, նրան հուսադրելու և նրա առաջընթացին հավատալու հնարավորություններ:

4. Կարևորելով մտավոր հետամնաց երեխաների ուղղագրության ուսուցման գործընթացում սովորողների հոգեկան գործընթացների զարգացումն ու դրանց հիմքում ընկած զգայարանների գործունեության ակտիվացումը՝ առաջնորդվել առանձնահատուկ մեթոդական երաշխավորություններով, ընտրել ուսուցման այնպիսի մեթոդներ ու դրանց կիրառման այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն այս երեխաների ակտիվ գործունեությունը:

5. Անցկացրած ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տվել, որ անհրաժեշտ է վերանայել և լրամշակել հատուկ (օժանդակ) դպրոցի մայրենի լեզվի ուսուցման ծրագրի բովանդակությունն ընդհանրապես, ուղղագրության բաժինը՝ մասնավորապես: Ծրագրի բովանդակությունը և կառուցվածքը մշակելիս կարևորել ուսուցման գործընթացի անձնակողմնորոշված բնույթը, ուղղագրության ուսուցումն իրականացնել ոչ թե բառի, այլ տեքստի, կենդանի խոսքի մակարդակով:

6. Առանձնահատուկ ուշադրություն դարձնել ուղղագրության յուրացման գործընթացում հնչյունային սկզբունքին (լոգոպեդական աշխատանքների համադասարանային կիրառման ճանապարհով)՝ կարևորելով ուսուցիչների համար ուսումնաօժանդակ նյութերի տպագրության խնդիրը՝ դրանք համապատասխանեցնելով օժանդակ դպրոցի հայոց լեզվի ծրագրային նյութերի բաժիններին, հատուկ (օժանդակ) դպրոցի հայոց լեզվի դասագրքերի ստեղծումը և միայն ու միայն փորձարարական ճանապարհով ներդնումը:

7. Հատուկ (օժանդակ) դպրոցում հայոց լեզվի ուսուցման մեթոդիկայի բուհական դասընթացում կարևոր տեղ տալ ուղղագրական և ուղղախոսական կարողությունների ձևավորման մեթոդներին և ուսանողների՝ այդ ուղղությամբ ձեռք բերած գիտելիքներին և ունակություններին. հասնել նրան, որ օժանդակ դպրոցներում դասավանդեն միայն մասնագիտական կրթություն ստացած մանկավարժները:

8. Մեր կողմից մշակված և փորձարկված ուղղագրական կարողությունների ձևավորման մեթոդական համալիրն ու ձևակերպված պահանջ-կողմնորոշումները (մասնակի փոփոխություններով) լիարժեքորեն կարող են ներդրվել նաև ներառական կրթության պայմաններում:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Միքայելյան Ա. Վ., Մտավոր զարգացման խաթարում ունեցող երեխաների գրավոր խոսքին բնորոշ սխալները, դրանց կանխարգելման և ուղղման մի քանի մեթոդական հնարները, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական աշխ. ժողովածու, Հ. 1-ին, «ՄԱՆԿԱՎԱՐԺ» հր., 2002, էջ 285-288:
2. Միքայելյան Ա. Վ., Ուղղագրության ուսուցման մեթոդական առանձնահատկություններից մի քանիսը օժանդակ դպրոցում, «Մանկավարժական միտք» հանդես, 2004(3-4), էջ 116-120:
3. Միքայելյան Ա. Վ., Մտավոր զարգացման թերություններ ունեցող երեխաների ուղղագրական կարողությունների ձևավորման հարցի շուրջ, «Մանկավարժական միտք» հանդես, 2005(2-3), էջ 149-152:
4. Միքայելյան Ա. Վ., Խուլ դպրոցականների կապակցված գրավոր խոսքի դժվարությունները և դրանց հաղթահարման մի քանի ուղիներ, «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն», գիտամեթոդ. հոդվ. ժող., 2007(6), էջ 55-58:

5. Միքայելյան Ա. Վ., Լեզվական թերությունների ազդեցությունը երեխաների ընդհանուր զարգացման վրա, Պրոֆ. Ա. Տեր-Գրիգորյանի ծննդյան 80-ամյակին նվ. գիտաժողովի նյութեր, Եր., «Էդիթ պրինտ» հր., 2009, էջ 62-66:
6. Միքայելյան Ա. Վ., Ուղղագրության և ուղղախոսության ուսուցման դերը մտավոր հետամնացություն ունեցող երեխաների երկրորդային խանգարումների շտկման գործընթացում, Պրոֆեսորադաս. անձն., հայցորդների և գիտաշխ. 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., «ՄԱՆԿԱՎԱՐԺ» հր., 2010, էջ 260-262:
7. Միքայելյան Ա. Վ., Մայրենի լեզվի ուսուցման մի քանի հարցեր ներառական կրթության պայմաններում, «Հատուկ մանկավարժություն և վերականգնողական հոգեբանություն» գիտական հանդես, 1 (2), Եր., 2011, էջ 36-41:
8. Միքայելյան Ա. Վ., Մայրենի դասագործընթացում երկրորդային խանգարումների շտկման հնարավորությունները ներառական կրթության պայմաններում, Հանրապետական գիտաժողովի նյութեր, Եր., «Լինգվա» հր., 2013, էջ 261-269:

МИКАЕЛЯН АРМИНЕ ВАЛЕРЬЕВНА

**ОСОБЕННОСТИ ОБУЧЕНИЯ АРМЯНСКОМУ ПРАВОПИСАНИЮ В
ВСПОМОГАТЕЛЬНОЙ ШКОЛЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - <<Методика преподавания и воспитания>> (армянский язык).

Защита диссертации состоится 2-го июля 2015г. в 12⁰⁰ на заседании специализированного совета по педагогике 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

АКТУАЛЬНОСТЬ ИССЛЕДОВАНИЯ. В результате анализа существующей на армянском языке литературы по специальности мы выяснили, что относительно процесса организации обучения родному языку в специальной (вспомогательной) школе до сих пор не проводились комплексные исследования, не были учтены и систематизированы особенности устной и письменной речи умственно отсталых армянских детей, не были разработаны методические рекомендации.

Таким образом, актуальность нашего исследования обусловлена традиционно недостаточной разработанностью этой проблемы в армянской действительности, отсутствием армяноязычной методической литературы, неадекватным разъяснением этой языковой задачи в учебниках по родному языку для специальных (вспомогательных) школ.

ЦЕЛЬ ИССЛЕДОВАНИЯ - разработка такого методического комплекса обучения правописанию родного языка в специальной (вспомогательной) школе, который будет учитывать умственные и физические особенности учащихся специальных школ, будет способствовать формированию письменной речи умственно отсталых детей, а также совершенствованию возможностей коррекции вторичных нарушений.

ЗАДАЧИ ИССЛЕДОВАНИЯ

1. Выявить исторические предпосылки и тенденции развития методики обучения армянскому правописанию в специальной (вспомогательной) школе.

2. Исследовать и проанализировать состояние дел по обучению родному языку, в частности – формированию и развитию умений по правописанию у школьников во вспомогательной школе, обосновать необходимость специальной деятельности в этом направлении и возможности их реализации.

3. Исследовать характерные для письменной речи ошибки (по правописанию) у учащихся специальных (вспомогательных) школ, выявить их причины.

4. Разработать, экспериментально обосновать и ввести такой комплекс обучения правописанию в специальных (вспомогательных) школах РА, который соответствовал бы умственным, физическим и возрастным особенностям учащихся, и соответствовал бы личностно-ориентированным подходам к обучению.

5. Посредством опытного обучения проверить и обосновать разработанный нами методический комплекс, направленный на развитие орфографических умений у учеников специальных (вспомогательных) школ, который обеспечит не только эффективное

формирование умений и навыков у умственно отсталых учащихся, но и будет способствовать коррекции вторичных нарушений у этих детей, развитию познавательной деятельности, общему развитию личности.

НАУЧНАЯ НОВИЗНА ИССЛЕДОВАНИЯ.

- Исследованы и систематизированы ошибки, встречающиеся в письменной речи умственно отсталых армянских детей, выявлены причины их возникновения.
- Исследованы, проанализированы и систематизированы методы формирования орфографических умений учащихся специальных (вспомогательных) школ РА, результаты диагностики этого процесса в контексте личностно-ориентированного обучения.
- Разработан методический комплекс по повышению эффективности процесса формирования орфографических умений учащихся специальных (вспомогательных) школ, что предполагает начинать работы в этом направлении параллельно процессу освоения грамоты, уделяя особое значение развитию внеречевых функций.
- Были уточнены и обоснованы педагогические условия эффективности обучения правописанию в специальных (вспомогательных) школах.
- С помощью опытного обучения был проверен и дополнен комплекс практических работ, направленных на формирование орфографических умений учащихся специальных (вспомогательных) школ, соответственно разработаны методические рекомендации по их внедрению в случае сочетанных нарушений.

ТЕОРЕТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ИССЛЕДОВАНИЯ. Исследованы и рассмотрены теория и практика правописания армянского языка с точки зрения современного армянского языка, а также выявлена и представлена методика обучения армянскому правописанию в специальных (вспомогательных) школах с учетом достижений как современной педагогики и методики, так и специальной педагогики и психологии.

ПРАКТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ИССЛЕДОВАНИЯ. Предложенный комплекс методических способов обучения армянскому правописанию, формированию и закреплению навыков правописания в специальных (вспомогательных) школах будет способствовать формированию и развитию соответствующих умений у учащихся. Полученные результаты могут способствовать формированию у умственно отсталых детей не только умений правописания, но и коррекции вторичных нарушений у этих детей.

АПРОБАЦИЯ ИССЛЕДОВАНИЯ – проводилась на заседаниях кафедры родного (армянского) языка и методики его преподавания АГПУ им. Х. Абовяна, в ряде внутриуниверситетских и республиканских научных конференций, во время семинаров и заседаний методобъединения, организованных в специальных (вспомогательных) школах No.6, No.12, в общеобразовательной школе No.114 им. Хачика Даштенца, осуществляющей инклюзивное обучение.

СТРУКТУРА И ОБЪЕМ ИССЛЕДОВАНИЯ. Диссертация состоит из введения, 3-х глав, заключения, списка использованной литературы, приложения и актов внедрения результатов исследования.

Объем диссертации составляет 184 компьютерных страниц.

ARMINE MIKAELYAN VALERI

PECULIARITIES OF TEACHING ARMENIAN SPELLING IN SPECIAL SCHOOL

Dissertation for the degree of candidate for pedagogical sciences, major 13.00.02- <<Methodology of Teaching and Education>> (the Armenian Language).

The defence of the dissertation will be held at 12⁰⁰ on the 2th of July 2015, at the session of the Special Board 020 HAC to award scientific degrees at the Armenian State Pedagogical Universiti after Kh. Abovyan: 0010, 17 Tigran Mets, Yerevan.

SUMMARY

The relevance of the research. While studying the existing Armenian specialized literature, we have found out that no comprehensive research has been done as to the organization of the mother tongue learning process in special school so far, nor the written and spoken language features of mentally retarded children have been registered and coordinated in Armenia, nor any methodological guidelines have been developed. Native language teaching is mainly carried out by the same methods and means as the ones that are used in secondary schools. The mentioned circumstances extremely complicate the teaching process of the mother tongue in a special school and, undoubtedly, prevent mentally retarded children from the secondary disorders correction process, as well as from their development in general.

Consequently, the significance of our research stems from the insufficient studies of the problem in Armenia, from the absence of teaching and learning materials in the Armenian language, and from the inadequate clarification of this linguistic problem in the Native Language textbooks for a special school.

The aim of the research is elaboration of such a methodological complex of Armenian spelling instructions which will fully take into account students of special schools with their mental and physical abilities, promote the formation and development of their written and spoken language skills, and provide opportunities for improvement and correction of their secondary disorders.

The research objectives are:

1. to identify the historical background and development trends of teaching spelling in a special school in Armenia;
2. to examine and analyze the productivity of the current native language learning, particularly the formation and development of spelling abilities in a special school, as well as demonstrate the need for special activities and possibilities for their implementation;
3. to study spelling errors characteristic to the written word of special school students and to reveal their causes;

4. to work out, validate by experiments and introduce such a teaching method for spelling in special schools in the Republic of Armenia which will qualify for the mental, physical and age peculiarities and correspond to the person-centered learning approach;
5. to verify and substantiate by the experiment the methodology worked out by the author of the current research which will not only provide effective development of spelling abilities of special school students, but also correct these childrens' secondary disorders, boost their cognitive activities and improve their personality development in general.

The scientific novelty of the research:

- Mistakes which are found in the written works of mentally retarded Armenian children have been studied and classified, as well as the cause of their occurrence and their forms of expression have been analyzed.
- Shaping methods of spelling abilities of special school students in the Republic of Armenia in addition to the results of the diagnostic process have been studied, analyzed and coordinated in the person-centered education context.
- A methodological complex has been worked out to improve efficiency of special school students' spelling ability formation process, which implies the beginning of the work in the mentioned direction parallel to literacy teaching and emphasizes the development of non-verbal functions.
- Pedagogical conditions of efficient spelling teaching were defined and justified for special schools.
- Aimed at special school students' spelling formation, a practical work complex has been checked and amended via experimental work. In addition, in case of combined disorders some methodological guaranties have been elaborated in order to apply it.

The theoretical significance of the research. The theory and practice of the Armenian spelling have both been thoroughly reviewed and considered from the point of view of the modern Armenian language. Also, an Armenian spelling learning method has been offered and presented to a special school, considering both modern pedagogy and methodology, as well as up-to-date achievements of special pedagogy (oligophrenopedagogy) and psychology.

The practical significance of the research. The complex of the proposed methodological techniques for the reinforcement of the Armenian spelling teaching and the formation of spelling skills in a special school will help students develop their skills. The obtained results may contribute not only to the elaboration of the spelling skills of mentally retarded children, but also to the facilitation of mastering other sections in the native language course, teaching other subjects, as well as to the development and correction of these childrens' secondary disorders such as speech, thinking and mental processes.

The structure and volume of the dissertation: The dissertation consists of an introduction, 3 chapters, a conclusion, references, appendices and acts of the research findings implementation.

The computerized version of the dissertation comprises 184 pages.